թուղթ մ'ալ նոյն տարւոյ յուլիս 14–ին գրուած առ Մխիթար, յորում կրկին կը դառնայ մի և նոյն հարցերուն շուրջ. զայն ամբողջ կը նկատենք հրատարակել։

Գերապատուելւոյ և ամենասիրելւոյ տեառն տեառն
Մխիթար Վարդապետի և Աբբայի

.... Լուեալ իմ և ի միասին ուրախացեալ թէ գերապատուելի Խաչատուր աստուածաբանութեան վարդապետն հրամանաւ սուրբ ժողովին գնացեալ դէպ ի Վիէննայ առ ի ձեռնադրիլ ի նուիրակէն Եպիսկոպոս մաճառի յերկրին ի վերայ Հայոց ի տեղի Օգսէնտիոս ի տէր հանգուցեալ Եպս.ին, բայց ոչ գիտելով հաւաստին, երկբայեցեալ կամ[1]. ուստի աղաչեմ զտէրութիւնդ, զի զճշմարիտն ծանուսցես, զի ուրախութիւն իմ կատարեալ լիցի, և զայլ ինչ նորագոյն բան հանդիպիցի այդր խնդրեմ իմանալ։ Ինձ թուի թէ նանցեալ գրին իմոյ գրեալ եմ Եղբայրութեանդ շուրջ զտէգռէթօին, զոր ընկալայք ի սուրբ ժողովոյն. բայց բազմիցս խնդրեցի. և տէրութիւնդ խոստացաւ կատարել։ Գրեալ էի սիրելութեանդ թէ ոմանք հակառակելով արգիլեցին առ ի կատարել զտօնախմբութիւնսն ընդ լաթինացւոց, և մանաւանդ զյայտնութիւն տեառն, զոր պարտէաք առնել ի զ. յունվարի ըստ նոր տօմարին. մյլ հայք խռովիչք դիմեցին առ արքեպիսկոպոսն փիսոյ, թէ մեք բռիվիլէճիօ ունիմք ի Հռոմայ գնալ ըստ Հին տօմարին, և թէ ոչ, մեք ալ չեմք իտար ըստըղած եկեղեցւոյ. և տեսեալ եպիսկոպոսին խռովութիւնսն Հայոց, և ինքն ոչ կամելով խռովութեան զձայն լսել, գրեաց ինձ թէ որպէս յառաջուց թոյլտուութիւն կայր Հայոց, այսպէս թոյլ տուր այժմ գնալ ըստ Հին տօմարին, ուստի հարկադրեալ կրկին կատարեցի զտօնախմբութիւնսն։ Բայց ըստ պարտականութեան իմոյ ծանուցի սուրբ ժողովին, որ և գրեաց Արքեպիսկոպոսին, և ինձ գովաբանելով զհնազանդութիւն իմ և զխոհեմութիւնն Արքեպիսկոպոսական և հրամայեաց նմա օգնել ինձ, զի և ես կարիցեմ այսուհետև ի միասին ըստ լաթինացւոց կատարել զտօնս։ Եւ եկեալ գնացի փիզայ, և զկնի բազում խօսակցութեան, առի հրաման ի նմանէ ձեռագրով իւրով, զի այսուհետև, որպէս սուրբ ժողովն հրամայեալ է՝ առնիցեմ. և եպիսկոպոսն հրամայեաց կատարել, և հայոց հնազանդիլ. արդ այժմ սկսեալ ի գիւտ խաչէն միատեղ կու կատարեմ զամենայն տօնսն տէրունական, աստուածածնայ, առաքելոց, և զամենայն հրամայեցեալ տօներն, և զայլ օրերն ըստ Հայոց տօմարին, կամ Հայրապետաց, կամ մարտիրոսաց։...

Թուին փրկչին 1719 *մայիսի* 22
յալիկուռնայ

տէրութեան քո
ծառայ Բարդողիմէոս վարդապետ
միսիօնար առաքելական

ԺԹ.

Ստեփանոս Աստուածատուրի մէկ ուրիշ նամակին մէջ հետևեալ հետաքրքրական ու պատմական տեղեկութիւնները կը գտնենք։

Գերյարգելւոյ Հօրդ իմում ի Քրիստոս Աբբա Մխիթար
Աստուածաբանութեան վարդապետի ողջոյն յիսուսաւանդ

... Ցետ այսորիկ յայտ լիցի գերյարգելութեանդ նաև դիպուածս այս որ յաղագս ապպաթի պնչինին (քանզի կարծեմ թէ չէք դեռ ևս իմացեալ). սա ուրեմն լռելեայն ելեալ ի Հռոմայ նամսեանն սեպտեմբերի և իբրու փախեալ գնացեալ է ի քաղաքն դուրինոյ

---

1. Խաչատուր վարդապետ 1719ին Ս. Աթոռին կողմանէ այցելու ղրկուած էր ի Դրանսիլվանիա. այս ժամանակներս է որ կը ծագի ժողովրդեան մէջ այդ շփոթութիւնը (տես Հ. Ց. Թորոսեանի Վարք Մխիթարայ)։